



## «ԱՐՑԱՆ ՀԷԿ» ԲԲԸ

ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 10

ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

«Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովի կողմից ընդունված որոշումներ

2011 թվականի մայիսի 30-ին կայացել է «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողով:

Ստորև ներկայացվում է ժողովի կողմից ընդունված որոշումները (ժողովի արձանագրությունը կազմվել է 06.06.2011թ.-ին):

Վ. Բեգլարյան

Գլխավոր Տնօրեն, Տնօրենների կորիորդի անդամ

(ստորագրություն)

08.06.2011թ.

**«ԱՐՑԱՆ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ**

**ՈՐՈՇՈՒՄ**

«06» հունիսի 2011 թ.

N 1

**ք.Ստեփանակերտ**

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 85-րդ հոդվածը, «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության 11.6 կետի ա) ենթակետը և «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության 30.05.2011թ. կայացած բաժնետերերի ընդհանուր ժողովի արձանագրությունը՝ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը ո թ ո շ ու մ է՝

«Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության Տնօրենների կորիորդ ընտրել հետևյալ կազմով՝

1. Թևոյան Սպարտակ Ապետնակի
2. Բեգլարյան Վահրամ Վլադիմիրի

3. Բաբայան Սերուժան Հրանտի
4. Օհանջանյան Էմին Ռուբենի
5. Բեգլարյան Հայկ Բարսեղի

**Ժողովի նախագահ՝**

**Ս. Թևոսյան**

**«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ**

**ՈՐՈՇՈՒՄ**

«06» հունիսի 2011 թ.

N 3

**ք.Ստեփանակերտ**

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի ժ) կետի ժբ) ենթակետը, «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության 11.6 կետի ե) ենթակետը և «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության 30.05.2011թ. կայացած բաժնետերերի ընդհանուր ժողովի արձանագրությունը՝ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը **ո ր ո շ ու մ է՝**

Հաստատել «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության 2010 թվականի ֆինանսատնտեսական գործունեության տարեկան հաշվետվությունները, հաշվապահական հաշվեկշիռները, զուտ շահույթի բաշխման համամասնությունները, այդ թվում՝ շահութաբաժինների մեկ բաժնետոմսի անվանական արժեքի նկատմամբ 10 % տարեկան եկամտաբերության հաշվարկով, մասհանումներ Գլխավոր պահուստին՝ զուտ շահույթի 5.7%-ը, չբաշխված շահույթ 300000000 (երեք հարյուր միլիոն ) ՀՀ դրամ:

**Ժողովի նախագահ՝**

**Ս. Թևոսյան**

**«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ**

**ՈՐՈՇՈՒՄ**

«06» հունիսի 2011 թ.

N 4

**ք.Ստեփանակերտ**

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի ժ) կետի ժբ) ենթակետը, «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության 11.6 կետի գ) ենթակետը և «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության 30.05.2011թ. կայացած բաժնետերերի ընդհանուր ժողովի արձանագրությունը՝ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը **ո ր ո շ ու մ է՝**

2010 թվականի արդյունքներով ընկերության բաժնետերերին վճարել շահութաբաժիններ՝ 1 բաժնետոմսին 100 ՀՀ դրամ հաշվարկով՝ վճարումը սկսելով 2011թ. հունիսի 20 -ից :

**Ժողովի նախագահ՝**

**Ս. Թևոսյան»**